ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

«Գիտություն -2016» դասախոսական հարցման (2016թ. մայիս-հունիս) արդյունքների ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Իդեալականորեն բուհական դասախոսի աշխատանքային համակարգաստեղծ երկու առանցքային հատկանիշներն են **դասավանդումը** և **գիտական գործունեությունը**: Մնացած կողմերը՝ ներբուհական հասարակական գործունեություն, արտաբուհական սոցալական ակ-տիվություն, ոչ պաշտոնական հարաբերություններում տարբեր դերեր և այլն ածանցյալ են տվյալ հատկանիշներից այն իմաստով, որ, լավագույն դեպքում պետք է ծառայեն դրանց արդյունավետ իրագործմանը: Ըստ որում, տեսականորեն շատ դժվար է այդ երկու հատկանիշների միջև կարևորության խնդիր դնել: Այն պատճառով, որ ճանաչողության և հասարակությունների զարգացման ժամանակակից տեմպերը, համընդհանուր միտումներին հարմարվելու, դրանց հետ ներդաշնակվելու ազգապետական և քաղաքակրթական առանձնահատկությունները, տվյալ գործընթացներով և ինքնազարգացման անհրաժեշտությամբ պարտադրված կրթական համակարգերի բարեփոխումների համատեքստում՝ արդյունավետ ուսուցմանը օժանդակող գիտական գործունեությունը դարձնում են դասավանդման հետ հավասար կարևոր: Ուսուցման գործընթացում հենց դասախոսի գիտական այն աշխատանքների արդյունքների օգտագործումն է գիտելիքների ու հմտությունների ձեռքբերումը դարձնում ավելի զգայելի ու արդյունավետ, որոնք առնչվում են առարկայական ծրագրի բովանդակության հետ: Թեկուզ տարբեր չափով ու յուրովի, դա վերաբերվում է կրթական ծրագրում ներառված գրեթե բոլոր առարկաներին:

Սակայն, գաղտնիք չէ, որ իդեալականության հետ համեմատած իրականությունը փոքր ինչ այլ է: Հայտնի ու անհայտ մի շարք առարկայական ու անձնական գործոնների պատճառով, բուհական պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի գիտական գործունեությունը շատ բուհերում լիարժեքորեն չի կատարում այն ցանկալի դերը, որը, կրթական ծրագրերի արդ-յունավետ իրագործման հարցում վերագրված է իրեն: Մասնավորաբար, ի՞նչն է դրան խոչըն-դոտում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում, այն դեպքում, երբ ղեկավարությունը դա համարժեքորեն կարևորում է և իրապես ու գործնականորեն պատրաստ է կարելվույն օժանդակելու տվյալ խնդրի լուծման գործում: Այն բազմաթիվ անգամներ քննարկվել և հավաստվել է տնօրենության ու գիտխորհրդի նիստերում, ֆակուլտետային ու ամբիոնային պաշտոնական հանդիպումների ընթացքում: Դրա ապացույցներից է նաև այն հարցումը, որը կապված է պրո-ֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեության հետ և որը, 2016 թվականի մայիս-հունիս ամիսներին անց է կացվել մասնաճյուղի ՄԿՈԱ բաժնի կողմից:

Հարցաշարում ընդգրկվել են հարցեր, որոնք բացահայտում են դասախոսների վերաբերմունքը գիտական գործունեության հանդեպ, այդ գործունեությանը օժանդակող կամ խոչընդոտող գործոնները, դասավանդման գործընթացում նրա արդյունքների ներառվածության փաստերը, տարածաշրջանային խնդիրների հետ գիտական հետաքրքրությունների կապվածությունը, դրանցում դասախոսների մասնակցության պատրաստակամությունը: Համապատասխան հարցերը գնահատվում են 5 բալանի սանդղակով, որտեղ 2-ը ամենացածր գնահատականն է, 5-ը՝ ամենաբարձրը, իսկ 1-ը նշանակում է՝ դժվարանում եմ պատասխանել: Հարցաշարում ընդգրկվել են նաև մի շարք «բաց հարցեր», որտեղ առաջարկվել է ներկայացնել սեփական կարծիքներն ու նկատառումները:

Հարցմանը մասնակցել են մասնաճյուղի 83 դասախոսներ, որոնք, ըստ ամբիոնների, գիտական կոչման, տարիքի և սեռի բերված են աղյուսակում: Քանի որ ամբիոնների պրոֆեսորա-դասախոսական անձնակազմերը քանակապես շատ են տարբերվում (օրինակ՝ Օտար լեզուների ամբիոնում 31 դասախոս, Դիզայնում՝ 7), այդ պատճառով համամասնական ընտրությունից հրաժարվել ենք և ձգտել, որ բոլոր ամբիոնները մոտավորապես բավարար ներկայացված լինեն ըստ գիտական կոչման, սեռի և տարիքի (հիշեցնենք նաև, որ նման հարցումներին մասնակցությունը բացարձակապես կամավոր է ու գիտականորեն «չի հանդուրժում» որևէ ստիպողականություն): Նման կամավոր մասնակցության արդյունքում բավարար են ներկայացված նաև մայրաքաղաքից հրավիրված ու տեղացի դասախոսները: Չնայած այն տվյալներում առանձնացված չէ, կարծում ենք, որ պատասխաններում առկա է որպես միջնորդավորված գործոն:Այնպես որ, առաջին մոտավորությամբ կարող ենք ասել, որ, որակա-քանակական առումով, հարցաշարին պատասխանողները ներկայացնում են մասնաճյուղի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմը: Ներկայացնենք հարցման արդյունքները և դրանց որոշակի վերլուծությունը:

Աղյուսակ 1. **Հարցմանը մասնակցած դասախոսների թիվն ըստ գիտական աստիճանի, տարիքի, սեռի**

ընդհ. թիվը/ մասն.թիվը	Ընդ.		ԳԳՔ		Դիզ		ԸՄ/Բն		ԸՏնտ և ՏԿ/Մ		Ծ/ԻՏ		ՀԼԳ		ՀՊատմ		Մ/Հ		ՕտԼ	
դոկտոր	3	1							1						2	1				
թեկնածու	67	46	2	2	2	2	13	10	15	7	4	2	10	7	8	6	6	7	7	3
առանց գ/ա	54	36	4	2	5	1	4	2	6	4	4	2	1	2	7	5	5	3	18	15
Ընդամենը	*124*	***83***	*6*	***4***	*7*	***3***	*17*	***12***	*22*	***11***	*8*	***4***	*11*	***9***	*17*	***12***	*11*	***10***	*25*	***18***

Գիտական աստիճանը	Ընդ.	ըստ տարիքի			ըստ սեռի	
		<=30	31-51	>51	ար	իգ
դոկտոր	1			1	1	
թեկնածու	46	7	26	13	30	16
առանց գ/ա	36	4	18	14	12	24
Ընդամենը	***83***	***11***	***44***	***28***	***43***	***40***





Այն հարցին, թե դասախոսական աշխատանքի համար գիտական գործունեությունը մասնաճյուղի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմը որքանով է անհրաժեշտ համարում, **83** պատասխաններից **38-ում** նշվել է, որ դա իրենց համար անհրաժեշտություն է, **40**-ը՝ բոլոր դեպքերում կարևոր է, ինչը մեր գնահատման սանդղակում համապատասխանում է շատ բարձր և բարձր գնահատականներին: Ընդամենը 3 դասախոս են սույն հարցի առնչությամբ արտահայտել չեզոք դիրքորոշում («դա և կարևոր է, և՝ կարևոր չէ»), իսկ 2-ը գտնում են, որ դա դասախոսի համար քիչ կարևոր է: Այստեղ, թերևս, ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ այս **5** դասախոսից 3-ը գիտությունների թեկնածուներ են: Այսինքն, կարելի է ասել, որ հարցվածների գերակշիռ վիճակագրական մեծամասնությունը **(93,7%-ը)** գիտակցում է, որ գիտական մշակույթը, գիտական հետաքրքրությունները և դասավանդմանը զուգընթաց գիտական ուսումնասիրություններ կատարելն իր աշխատանքային երկու հիմնական «հոգսերից» մեկն է: Մյուս կողմից, միայն ենթադրություններ կարելի է կատարել, թե հինգից երեք գիտական կոչում ունեցողները ո՞ր դիրքորոշումներից են մղվել, որ դասախոսական աշխատանքում գիտական գործունեությունը պարտադիր չեն համարում: Մի դեպքում, դա կարող է կապված լինել տարածաշրջանային սոցիալ-տնտեսական իրավիճակի, մեկ ուրիշում՝ արժեքային համակարգի գերակայությունների, երրորդում՝ աշխարհայացքային համոզմունքների, և, թերևս, որ ամենաանցանկալին է, տվյալ անհրաժեշտությունը չգիտակցելու կամ անձնական և առարկայական գործոնները շփոթելու (չտարբերակելու) հետ և այլն: Որ ասվածը ունի տրամաբանական հիմնավորվածություն և որոշակի հիմքեր, թերևս միջնորդավորված ցույց են տալիս մյուս հարցերի պատասխանները:



Այսպես, այն հարցին, թե **<u>ամբիոնը որքանո՞վ է խթանում</u>** դասախոսների գիտական գործունեությանը, գիտական աստիճան ունեցող դասախոսների տված գնահատականների միջինը 5 բալանի սանդղակով հավասար է մոտավորապես 3,85: Ըստ որում, արական սեռի դասախոսների գնահատականը 3,89 է, իսկ իգականինը՝ 3,59 (նման տարբերությունը թերևս բնական է և ըմբռնելի, վիճակագրորեն կին դասախոսները կենցաղային հոգսերով ավելի են զբաղված, ինչը որակապես նվազեցնում է գիտությամբ զբաղվելու նրանց օբյեկտիվ հնարավորությունները): Հարցմանը մասնակցած միակ դոկտորն այն գնահատել է 4,0, իսկ գիտության թեկնածուների և առանց գիտական աստիճանի դասախոսների գնահատականը վիճակագրորեն գրեթե նույն կարգի են՝ 3,69 և 3,85՝ համապատասխանաբար: Մինչև 30 տարեկան դասախոսների միջին բալը 3,63 է (նրանք 11 հոգի են), իսկ 31-51 և 51-ից բարձր տարիքի դասախոսներինը նորից վիճակագրորեն նույն կարգի են՝ 3,86 և 3,67՝ համապատասխանաբար: Այն դեպքում, երբ գիտական գործունեության առաջնայնությունը (դասավանդման կողքին) կարևորելու գնահատականը նույն 5-բալանի սանդղակում որակապես բարձր է (մոտ 4,3):

Աղյուսակ 2. Որքանո՞վ է ամբիոնը խթանում դասախոսների գիտական գործունեությունը

Ամբիոն	Միջ. գնահ.	ԳԳՔ	Դիզ	ԸՄ/Բն	ԸՏնտ	Ծ/ԻՏ	ՀԼԳ	ՀՊատմ	Մ/Հ	ՕտԼ
<=30	3,63		5,00	3,00	5,00		3,00		3,00	3,50
31-51	3,86	5,00		3,57	4,00		3,00	4,17	4,40	4,00
>51	3,67	3,00	3,00	4,00	3,80	3,50	2,00	4,50	3,00	4,40
ար	3,89	3,00	4,00	3,55	4,00	5,00	3,33	4,25	4,25	5,00
իգ	3,59	5,00			4,00	2,00	2,50		3,50	4,00
դոկտոր	4,00							4,00		
թեկնածու	3,69	5,00	4,00	3,50	4,40	5,00	2,86	3,67	3,86	3,67
առանց գ/ա	3,85	3,00		4,00	3,33	2,00	2,50	4,75	4,00	4,17

Այսինքն կարելի է ասել, որ, վիճակագրորեն առկա է որոշակի խզում («դիալեկտիկական հակասություն») դասախոսների կողմից գիտական գործունեության անհրաժեշտության ու կարևորության գիտակցման և այն կյանքի կոչելու համար իրական հնարավորությունների միջև, տվյալ դեպքում՝ կապված համապատասխան ամբիոններում ու դասախոսների մոտ առկա օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանների հետ:

Նման, եթե կարելի է ասել, գիտականորեն հիմնավորված որոշ պասիվության վրա ազդող գործոնները բացահայտելու նպատակով դասախոսներին ուղղվել է համապատասխան բաց հարց այն մասին, թե **ի՞նչն է կաշկանդում** գիտահետազոտական գործունեության իրականացմանը, գիտական միջոցառումներին մասնակցությանը, գիտական ծրագրերում ընդգրկվելուն:

Հետազոտական գործունեության խոչընդոտների վերաբերյալ հարցի 36 պատասխաններից (մնացածը չեն պատասխանել) **14-ում** նշվել է, որ նման խոչընդոտներ իրենք չեն տեսնում: Մնացած պատասխանները որակական տեսանկյունից ըստ ամբիոնների բաժանելը նպատակահարմար չենք գտնում, քանի որ քիչ են և վիճակագրորեն տեսակարար կշիռը բավարար չէ: Այդ պատճառով նշենք այն պատասխանները, որոնք մեր կարծիքով այս կամ այն չափով արժանի են ուշադրության: 7-ը պատասխաններում, տարբեր ձևակերպումներով այս կամ այն կերպ շեշտվում է զբաղվածությունը, ժամանակի սղությունը, 5-ում՝ արտաքին և ներքին շարժառիթների պակասը, 5-ում՝ տեղեկատվության, հետազոտական տեխնիկայի պակաս հնարավորությունները, 3-ում՝ ավելորդ թղթարարությունը (բյուրոկրատիան), 1-ում՝ ոչ բավարար գիտական համագործակցությունը մյուս բուհերի հետ, 1-ում՝ օտար լեզուների ոչ բավարար իմացությունը:

Գիտական միջոցառումներին չմասնակցելու (կամ ոչ բավարար մասնակցության) պատճառների վերաբերյալ դասախոսները (ընդամենը եղել է 15 պատասխան) նշում են 2-3 հիմնական պատճառ, այն է՝ ֆինանսական հնարավորությունները, անհրաժեշտությունը և ժամանակի սղությունը (օբյեկտիվ զբաղվածությունը): Միաժամանակ մեկական դասախոսներ շեշտել են. մասնաճյուղում գիտաժողովների (հանրապետական, միջբուհական) սակավությունը կամ գրեթե բացակայությունը, վարչական աշխատանքը:

Իրազեկվածությունը և ժամանակի սղությունը համարվել են նաև գիտական ծրագրերում ոչ բավարար ընդգրկվածության գլխավոր խոչընդոտները: Մեկ դասախոս է միայն խոստովանել, որ նման ցանկություն չունի:

Ասվածից կարելի է կատարել միջանկյալ հետևություն, այն է. մասնաճյուղի դասախոսները վիճակագրորեն համարում են, որ գիտական ոչ լիարժեք ակտիվությունը առավելապես ունի արտաքին, իրենց անձնական ցանկությունից ու համոզվածությունից դուրս պայմանավորվածություն և կապված է սոցիալ-տնտեսական ու կազմակերպչական (առավելապես ամբիոնի մակարդակով) խնդիրների հետ: Որքանով է այն ճշմարտացի ու արդարացված, կարծում ենք՝ գնահատման չափանիշների ու մոտեցումների հարց է: Տեսականորեն և գործնականորեն չմերժելով նման առնչության հնարավորությունը, հատկապես ռազմա-քաղաքական ներկա պայմաններում, այն էլ՝ սահմանամերձ տարածաշրջանում, միաժամանակ հարկ է նշել, որ այն բացարձականացնելը օգտակար չէ: Ինչպես գիտության զարգացման պատմությունից, այնպես էլ առկա գիտական առօրյայից կարելի է բերել բազմաթիվ օրինակներ, երբ գիտնականը գիտությամբ զբաղվել է ու որոշակի արդյունքների է հասել ծայրահեղ ծանր սոցիալ-կենցաղային դժվարությունների, կառավարման տարբեր օղակների կողմից ամենատարբեր խոչընդոտների հարուցման պայմաններում: Հայտնի են բազմաթիվ անձնազոհության, ինքնազոհաբերման օրինակներ գիտության նվիրյալների կողմից: Այսինքն, գիտական պասիվությունը զուտ արտաքին գործոններով պայմանավորելը լիարժեքորեն չի կարող համապատասխանել իրականությանը: Հավանաբար այստեղ որոշակի գործոն է նաև ինքնաքննադատության պակասը, ինչը վիճակագրորեն «քողարկվել է» հարցաշարին մասնակցող պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի կողմից: Նման հետևության համար հիմք է այն փաստը, որ գիտական ակտիվության խոչընդոտների մեջ, բացի մեկ պատասխանից, որտեղ նշվել է նման ցանկության բացակայությունը, ուրիշ «ինքնաքննադատական» որևէ պատասխան ամրագրված չէ:

Աղյուսակ 3. **Գիտական գործունեության գնահատականներն ըստ հարցերի**

N	Հարց	Ընդ.	չ/պ	դժ/պ	2	3	4	5
4	Ձեր կարծիքով, որքանո՞վ է ամբիոնը խթանում դասախոսների գիտական գործունեությունը	83	6	10	11	12	26	18
9	Ձեր մասնագիտացումը որքանո՞վ է հնարավորություն տալիս զբաղվելու տարածաշրջանի հիմնախնդիրների ուսումնասիրությամբ	83	2	4	20	10	20	27
10	Ըստ Ձեզ, ամբիոնում որքանո՞վ են փոխկապակցված հետազո-տական գործունեությունը և ուսումնական գործընթացները	83	3	6	10	19	33	12
12.1	Ինչպե՞ս կգնահատեք մասնաճյուղի ուսանողների հետազոտական կարողությունները	83	6	1	18	40	15	3
12.2	Ինչպե՞ս կգնահատեք մասնաճյուղի ՈՒԳԸ-ի գիտական գործունեությունը	83	10	6	23	29	13	2

Միջնորդավորված ձևով խնդրո առարկայի հետ է առնչում նաև **տարածաշրջանային խնդիրների հանդեպ** մասնաճյուղի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի գիտական հետաքրքրությունների հարցը: 83 դասախոսից **47-ը** նշել են, որ իրենց մասնագիտացումը լիարժեքորեն թույլ է տալիս զբավելու տարածաշրջանային հիմնախնդիրների ուսումնասիրությամբ (5 բալանի սանդղակով գնահատվել է 5 և 4): 10 պատասխանում հավաստվել է, որ մասամբ է թույլ տալիս (5-բալանի սանդղակով գնահատվել է 3), իսկ 20՝ում ասվել է, որ գործնականում իրենց մասնագիտացումը տարածաշրջանային հիմնախնդիրների

հետ գործնական առնչություն չունի (5-բալանի սանդղակով գնահատվել է 2): 4 դասախոս տվյալ հարցին դժվարացել են պատասխանել, իսկ 2-ում պատասխանները բացակայել են: Կարծում ենք, որ ինչպես մասնագիտացումների ցանկի, այնպես էլ ընտրանքային խմբի ընդհանուր գնահատականի (76 դրական պատասխաններից 47 ում՝ բարձր և շատ բարձր գնահատական) տեսանկյունից մասնաճյուղն ունի բավական մեծ ռեսուրսներ, կապված տարածաշրջանային խնդիրների լուծմանը գիտական օժանդակություն ցուցաբերելու հետ: Օրինակ, «Մանկավարժության և հոգեբանության», «Հայոց պատմության և հասրակագիտության», «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոններից հարցմանը մասնակցած գրեթե բոլոր դասախոսները նշել են, որ իրենց մասնագիտացումներն ընձեռում են տարածաշրջանային խնդիրներն ուսումնասիրելու ամենալայն հնարավորությունները (հարցմանը մասնակցած տվյալ ամբիոնների 33 դասախոսներից 23-ը գնահատել են՝ 5 բալ, 4-ը՝ 4 բալ, այսինքն 82,0%-ը գնահատել են՝ բարձր և շատ բարձր):

Աղյուսակ 4. **Ձեր մասնագիտացումը որքանո՞վ է հնարավորություն տալիս զբաղվելու տարածաշրջանի հիմնախնդիրների ուսումնասիրությամբ**

Ամբիոն	չ/պ	դժ/պ	2	3	4	5	*Ընդամենը*
ԳԳՔ			1	1	1	1	*4*
Դիզ		1			2		*3*
ԸՄ/Բն		2	5	1	4		*12*
ԸՏնտ և ՏԿ/Մ			1	1	3	6	*11*
Ծ/ԻՏ		1	1			2	*4*
ՀԼԳ			7	1		1	*9*
ՀՊատմ			1	2	1	8	*12*
Մ/Հ	1					9	*10*
ՕտԼ	1		4	4	9		*18*
Ընդամենը	*2*	*4*	*20*	*10*	*20*	*27*	*83*

Որ այս ռեսուրսները հնարավոր է ավելի օպտիմալ օգտագործել մատնանշում է այն փաստը, որ 2011-2016 թթ. ընթացքում մասնաճյուղի 28 դասախոսների թեկնածուական ատենախոսություններից (մեկը՝ դոկտորական) միայն երկու թեկնածուական ատենախոսություններն են նվիրված եղել տարածաշրջանային հիմնախնդիրներին: Այն դեպքում, երբ, նույնիսկ գիտաբարոյական տեսանկյունից պետք է, որ հանրապետության գիտական շրջանակները, ի դեմս համապատասխան գիտական խորհուրդների, «գրկաբաց» ընդունեն հենց տարածաշրջանային հիմնահարցերին նվիրված գիտական հետազոտությունները, և հատկապես՝ նվիրված հանրապետության ամենաբազմաքանակ, տնտեսապես կարևոր ու սահմանային տարածաշրջաններից մեկին՝ Տավուշի մարզին: Սույն առումով թերևս հուսադրող է և, հետագա գիտական ուսումնասիրությունների համար յուրովի խթան ու ռեսուրս կարող է հանդիսանալ Տավուշի մարզի խնդիրներին նվիրված ավարտական աշխատանքների մեծ քանակությունը: Այսպես, 2011-15 թթ. Մանկավարժության և հոգեբանության գծով պաշտպանած 113 ավարտական աշխատանքներից 67-ը, իսկ Անտառագիտության և տուրիզմի կառավարման գծով պաշտպանած 59-ը ավարտական աշխատանքից 24-ը նվիրված են եղել տարածաշրջանային հիմնահարցերին: Իհարկե, հասկանալի է, որ մասնաճյուղի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմում մեծ թիվ են կազմում մայրաքաղաքից հրավիրված կադրերը: Նրանցից շատերն ունեն տասնամյակների

գիտաուսումնական աշխատանքային ստաժ, կայուն գիտական հետաքրքրություններ, որոնք այդքան հեշտ չէ վերակողմնորոշել դեպի մարզի բազմաբնույթ խնդիրների հետազոտմանը: Այդուհանդերձ, հատկապես ռազմավարական տեսանկյունից կարևոր է, որ աստիճանաբար տեղային երիտասարդ կադրերով դասախոսական անձնակազմը համալրելուն զուգընթաց այն ուղեկցվի նաև տարածաշրջանային խնդիրների հանդեպ գիտական հետաքրքրությունների որակական աճմամբ: Մի բան, որը զուտ գիտական շահերի կողքին ունի նաև բարոյա-հայրենասիրական բաղադրատարր: Դա հրաշալի ընդառաջ քայլ է նաև մեր երիտասարդության (այդ թվում՝ մասնաճյուղի ուսանողության) հայրենասիրական այն դրսևորումներին, որոնց ականատեսն ենք մենք նրանց զինվորական ծառայության մեջ և ռազմադաշտում:

Մյուս կարևորագույն և առաջնային հարցը, որը նույնպես միջնորդավորված կապ ունի խնդրո առարկայի հետ այն է, թե դասախոսի **գիտական հետաքրքրությունները, գիտական ուսումնասիրությունների արդյունքներն ու գիտական մշակույթը որքանով են օժանդակում դասավանդման արդյունավետության բարձրացմանը:**

Աղյուսակ 5. **Ինչպե՞ս են Ձեր գիտական գործունեության արդյունքները ուսանողությանը դառնում մատչելի**

Ամբիոն	Ընդ.	ԳԳՔ	Դիզ	ԸՄ/Բն	ԸՏետ	Ծ/ԻՏ	ՀԼԳ	ՀՊատ	Մ/Հ	ՕտԼ
էլեկտրոնային համապատասխան կայք էջերի միջոցով	**1**									1
առկա է ամբիոնում	**5**				1		2	1		1
առկա է մասնաճյուղի գրադարանում	**5**			1		1			1	2
ներառվում են դասախոսություններում	**62**	**2**	**2**	**9**	**8**	**3**	**6**	**11**	**9**	**12**
ուսանողական պրակտիկաների ընթացքում	**1**				1					
ուսանողների հետ արտալսարանային շփումների միջոցով	**8**	1	1	2	1		1			2
ուրիշ (նշեք ինքներդ)	**1**	1								
Ընդամենը	**83**	4	3	12	11	4	9	12	10	18

Հարցաշարի այն հարցին, թե ի՞նչ ուղիներով են դասախոսների գիտական աշխատանքների արդյունքները մատչելի դառնում ուսանողությանը, 83 պատասխաններից **62-ում** նշված է, որ դրանք ներառված են դասախոսություններում, 8 պատասխաններում այդ արդյունքներն ուսանողներին է հասցվում արտալսարանային հաղորդակցման ընթացքում, 5-ում՝ առկա է ամբիոնում, և 5-ում՝ առկա է գրադարանում, 1 պատասխան՝ ուսանողական պրակտիկայի ընթացքում և 1 պատասխան՝ էլեկտրոնային համապատասխան կայք էջերի միջոցով: Կարծում ենք, որ դասախոսություններում գիտական արդյունքների լայնորեն օգտագործման նշված փաստը, որպես երևույթ և՛ բնական է, և՛ դրական: Միաժամանակ դրա զուգակցումը ուսանողության հետ արտալսարանային հաղորդակցման, պրակտիկաների ընթացքում, որպես ռեսուրս կարող է իրապես օժանդակել առարկայական ծրագրերի բովանդակության ավելի արդյունավետ յուրացմանը: Այստեղ ևս ամբիոնի դիրքորոշումը, դասախոս-ամբիոն համագործակցության համակարգը երկրորդական նշանակություն չունի: Եթե տվյալ համագործակցությունն այնպիսին է, որ ուսանողների մեջ գիտական հետաքրքրությունների զարգացումը, սեփական գիտական արդյունքներով թեման կամ

շոշափվող խնդիրներն ավելի մատչելի դարձնելը իրապես արժևորվում է, ապա օբյեկտիվորեն դասախոսներն իրենք պետք է շահագրգռված լինեն ավելի շատ արտալսարանային շփումների, պրակտիկաների հնարավորություններն ավելի լայն օգտագործելու հարցում: Ինչ խոսք, ուսանողների նախաձեռնողականությունը սույն հարցում (ինչի «դեֆիցիտը» թերևս ակնհայտ է) կարևոր է, սակայն պակաս կարևոր չէ նաև դասախոսների ու ամբիոնի «համբերատարությունը և համառությունը» նման նախաձեռնողականության խթանման ասպարեզում:

Հարկ է նաև խոստովանել, որ մասնաճյուղում «Կրթական ծրագրերի ղեկավար»-ի ինստիտուտի ձևավորման գործընթացները, նրա կայացումը նույնպես իր գործունեության հնարավոր բովանդակության մեջ պարունակում է նման նախաձեռնողականության լրացուցիչ լիցք: Քանզի նրա իմաստներից մեկը մասնագիտության և մասնագիտացման պատրաստման ոլորտում պատասխանատուներին ավելի մեծ ինքնուրույնություն ու լիազորություններ շնորհելու ուղիով ուսանողների ու գործատուների հետ ավելի լիարժեք ու համակողմանի համագործակցության ձեռքբերումն է, ապագա մասնագետների մեջ **գիտականության** հանդեպ ավելի ակտիվ ու շահախնդիր վերաբերմունք ձևավորելը: Հենց գիտականության, քանզի այն ներառվել է ժամանակակից աշխատանքային գործունեության գրեթե բոլոր ոլորտներում: Կարծում ենք պատահական չէ այն փաստը, որ հավաքականորեն դասախոսներն այդքան էլ բարձր չեն գնահատել ուսանողների հետազոտական կարողությունները /տես աղյուսակ 3-ը/: Տվյալ հարցին տրված 83 պատասխաններից **բարձր և շատ բարձր են գնահատել 18-ը**, բավարար՝ 40-ը, ցածր՝ 18-ը (1 դասախոս դժվարացել է պատասխանել): Ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) գիտական գործունեությունը **բարձր և շատ բարձր են գնահատել 15** դասախոս, բավարար՝ 29-ը և ցածր՝ 23-ը (6 դասախոս այստեղ դժվարացել են պատասխանել): Սա նշանակում է, որ դասախոսների հավաքական գիտակցության մեջ առկա է ուսանողների գիտական ներուժի զարգացման ու դրա կիրարկման կազմակերպմանը կոչված օղակի՝ ՈՒԳԸ գործունեության կատարելագործման խնդիրը: Տվյալ խնդրի լուծման գլխավոր պատասխանատուներն են նաև հենց ամբիոնն ու նրա դասախոսական կազմը, որոնց գործունեության մեջ նախաձեռնողաբար պետք է ավելի կարևորվի ուսանողության, նրա կազմակերչական օղակների (ՈՒԽ, ՈՒԳԸ) հետ համագործակցությունը: Սույն հարցում դասախոսների զուտ մասնագիտական գիտելիքների ու հմտությունների առկայությունը բավարար չէ: Գիտական մշակույթը, ապագա հնարավոր գիտական գործունեությունը պետք է համակարգի կողմից մատուցվի որպես ինքնաբավ արժեք բարձրագույն կրթություն ունեցողի համար: Իսկ սա լիարժեքորեն հնարավոր է միայն այն դեպքում, երբ ունի աշխարհայացքային համոզմունքի կարգավիճակ.

- այստեղ է, որ խաչվում են ուսումնական պլանի ընդհանուր կրթական և մասնագիտական բլոկների շահերը,
- այստեղ է, որ հումանիտար ու մասնագիտական առարկաների դասախոսների աշխարհայացքային համախոհությունը ձեռք է բերում առանցքային նշանակություն,
- այստեղ է, որ ցանկացած դասախոս և, առաջին հերթին հումանիտար առարկաների դասախոսներն իրենց անձնական նկարագրով ու վարքով պետք է լինեն իրենց մատուցած բարոյա-սոցիալական գիտելիքների ճշմարտացիության մարմնավորումը:

Այլ կերպ, դասախոսը պետք է ոչ միայն անհրաժեշտ գիտելիքները մատչելիորեն մատուցի, այլև «մատուցի ընդօրինակելի մատչելի վարք», ուսանողի աշխարհայացքային նկարագիրն ու

բարոյական վարքը հնարավոր է դարձնել շրջանավարտի վերջնական ու ամփոփիչ գնահատման համակարգի տարր, Օրինակ, «Աշխարհայացք» անվամբ Հումանիտար Պետական Քննություն (ՀՊՔ): Այն նաև ընդհանուր կրթական բլոկի արդյունավետության ծանրաչափ է: Մի իրողություն, որն ընդունակ և ուսման ծարավ ու ճշմարտությանը ձգտող ուսանողական խավի վրա կարող է ունենալ «կախարդական» ներգործություն, իսկ եթե, իհարկե, մեր օրերում հայտարարվի նման մրցույթ, ապա մասնաճյուղը նման ուսանողների քանակով թերևս հանրապետությունում գրավի բարձրակարգ տեղերից մեկը: Սույն հարցում ենթադրվում է, որ «Կրթական ծրագրի ղեկավարի» ինստիտուտը բացում է ամենալայն հեռանկարները: Վարկածի տեսքով առաջադրում ենք այն տեսակետը, որ, տվյալ ինստիտուտի կայացման դեպքում կստանանք մասնաճյուղի ուսանողության հետազոտական կարողությունների որակապես ավելի բարձր գնահատական, քան դասախոսների տված վերոնշյալ գնահատականը (նկատի ունենալով ինչպես հայ ազգային, այնպես էլ նրա մաս կազմող երիտասարդության, մասնավորաբար ու հատկապես Տավուշի մարզի, գիտակցության մեջ պատմականորեն ձևավորված կրթագիտական բարձր ցենզը):

Մեզ հետաքրքրել է նաև դասախոսների կարծիքն այն մասին, թե **ամբիոնում որքանո՞վ են փոխկապակցված հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացները**: Հարցմանը մասնակցած 83 դասախոսներից 45-ը (54,2%) գնահատել են բարձր և շատ բարձր, 19-ը՝ (22,8%) միջին և միայն 10 դասախոս (12,0%) այն գնահատել են ցածր: Այսինքն տվյալ փոխկապակցվածությունը բավարար մակարդակի վրա է և կարող է ավելին լինել, եթե արտաքին խոչընդոտները նվազեն:

Աղյուսակ 6. **Ամբիոնում որքանո՞վ են փոխկապակցված հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացները**

Ամբիոն	չ/պ	դժ/պ	2	3	4	5	*Ընդամենը*
ԳԳՔ		1	1		2		*4*
Դիզ			1	1	1		*3*
ԸՄ/Բն				6	6		*12*
ԸՏնտ		3	1	2	3	2	*11*
Ծ/ԻՏ		1	1			2	*4*
ՀԼԳ			2		5	2	*9*
ՀՊատմ	2		1	3	4	2	*12*
Մ/Հ		1	2	4	1	2	*10*
ՕտԼ	1		1	3	11	2	*18*
Ընդամենը	*3*	*6*	*10*	*19*	*33*	*12*	*83*

Միջազգային և ԱՊՀ երկրների վարկանիշային ամսագրերում հոդվածներ հրատարակելու **խոչընդոտների** վերաբերյալ բաց հարցի 47 պատասխաններից ձևավորվում է հետևյալ պատկերը. 24-ին անհանգստացնում են տպագրելու համար պահանջվող գումարները, 8-ին՝ լեզվական խնդիրները, 5-ին՝ տեղեկատվության պակասը, 4-ին՝ ժամանակի սղությունը (այլ աշխատանքներով զբաղվածությունը), 4-ին՝ բյուրոկրատական «քաշքշուկը», նաև՝ ներկայացված հոդվածների ոչ բավարար մակարդակը:

Մասնաճյուղի **«Ակունք»** ժողովածուում տպագրվելու վերաբերյալ հարցի պատասխաններն ավելի բազմազան են ու բազմաբնույթ: Այստեղ, թերևս, առաջինը պետք է նշվի տարբեր

ձևակերպումներով հարցադրման իմաստին անդրադառնալը, մասնավորաբար այն, որ ժողովածուն միայն մասնաճյուղի համար չէ, որ մասնաճյուղի դասախոսների կողմից հրատարակած փաստացի քանակությունը հարկավոր չէ «քիչ կամ պակաս» որակել, այլ պետք է համարել բավարար, այն պայմանավորված է դասախոսների մոտիվացիայով (կան դեպքեր, երբ արդարացված է ուրիշ պարբերականներում հրատարակումը՝ վերջին փաստարկը հատկապես վերաբերում է հրավիրված դասախոսներին): Նման փաստարկներ նշված են 15 հարցաթերթում, իսկ մեկում ուղղակի ասված է՝ «Ես կասեի հակառակը, նման փոքր բուհի համար դա ուղղակի փայլուն արդյունք է»:

Պատասխանների մի մասում դասախոսները հղվում են շահագրգռվածության պակասի, իրազեկվածության ցածր մակարդակի, ներկայացվող հոդվածների գիտական ցածր մակարդակի վրա: 1-2 պատասխաններում հղում է կատարվում ժողովածուի նեղ՝ հումանիտար ուղղվածության վրա, փաստելով, որ բնագիտական հոդվածները տպագրելու հնարավորությունը բացակայում է: Չնայած հղումը իրազեկվածության ցածր մակարդակին առկա է 2-3 պատասխաններում, այնուամենայնիվ, արտառոց է, քանզի «Ակունքի» ցանկացած համարում տեղադրված են բոլոր այն պայմաններն ու հնարավորությունները, որոնք պահանջվում են հոդվածների հրատարակման համար: Նշված է նաև, թե ում և ինչպես կարելի է հանձնել կամ ուղարկել պատրաստի գիտական աշխատանքները: Հետևաբար, անիրազեկության արմատները պետք է համապատասխան դասախոսները որոնեն իրենց մոտ, եթե իհարկե, չեն ցանկացել գիտակցաբար ոչ հավաստի ու անկեղծ պատասխաններ տալ առաջարկվող հարցերին (հարցման կազմակերպիչները հեռու են այդ մտքից):

Վերոնշյալ որակումների հետ թերևս համահունչ են այն հարցի պատասխանները, թե **հետազոտական արդյունքները հրատարակելիս, ո՞ր գործոններն են դասախոսների համար առաջնային** (կարելի էր ընտրել առաջադրված գործոններից երկուսը): 150 պատասխաններից 57-ում առաջնային է համարվել ԲՈՀ-ի ցուցակում պարբերականի առկայությունը, 38-ում՝ անվճարությունը, 35-ում՝ ամսագրի վարկանիշը, 15-ում՝ հրատարակման արագությունը և վերջապես 5-ում՝ իրավիճակային նպատակահարմարությունը:

Աղյուսակ 7. **Հետազոտական արդյունքները հրատարակելիս գործոնների առաջնայնությունը**

գիտական աստիճան, տարիք, սեռ	Ընդ.	Ըստ գիտական աստիճանի			ըստ տարիքի			ըստ սեռի	
		դոկտոր	թեկնածու	առանց գ/ա	<=30	31-51	>51	ար	իգ
ամսագիրը հաստատված լինի ԲՈՀ-Ի կողմից	**57**	1	27	29	7	33	17	24	33
իրավիճակային նպատակահարմարությունը	**5**		4	1		1	4	3	2
հրատարակությունը իրականաց-վի կարճ ժամանակահատվածում	**15**	1	9	5	3	8	4	7	8
տպագրությունը լինի անվճար	**38**		21	17	2	23	13	17	21
տվյալ ամսագիրը ունենա բարձր հեղինակություն	**35**		22	13	9	15	11	23	12
Ընդամենը	**150**	***2***	***83***	***65***	***21***	***80***	***49***	***74***	***76***

Ի դեպ նշենք նաև, որ հարցված 83 դասախոսների գիտական աշխատանքների ընդհանուր քանակը, իրենց իսկ գնահատմամբ, 1092 է, իսկ մեթոդականներինը՝ 252, ինչը, թերևս ավելի շատ դրական գնահատականի ապացույցն է, քան՝ նրա մերժումը:

Աղյուսակ 8. **Պրոֆեսորադասախոսական կազմի գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների մոտավոր քանակները**

գիտական աշխատանքներ	Ընդ.	Ըստ գիտական աստիճանի			ըստ տարիքի			ըստ սեռի	
		դոկ-տոր	թեկնա-ծու	առանց գ/ա	<=30	31-51	>51	ար	իգ
գիտական աշխատանքների քանակը	**1092**	15	843	234	70	371	651	824	268
ուսումնամեթոդական աշխատանքների քանակը	**252**	5	160	87	2	91	159	177	75
Ընդամենը	**1344**	***20***	***1003***	***321***	***72***	***462***	***810***	***1001***	***343***

Սա, իհարկե, չի բացառում ավելի շատ ու օգտակար գիտական աշխատանքների պատրաստումն ու հրատարակումը, հատկապես՝ մեթոդական ուղղվածության և, հատկապես մասնաճյուղի «Ակունք» ժողովածուում: Մանավանդ, որ ժողովածուն հումանիտար գիտությունների գծով ընդգրկված է ԲՈՀ-ի ցուցակում:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը կարող ենք փաստել հետևյալը.

1/ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի գերակշիռ մեծամասնությունը գիտական գործունեությունը համարում է դասախոսական աշխատանքի պարտադիր բաղադրատարր;

2/ Ընդհանուր առմամբ գիտական և մեթոդական աշխատանքների քանակությունը, դրանց արդյունքների ներառվածությունը դասավանդման գործընթացում հանդիսանում են դասախոսական և գիտական աշխատանքների իրական փոխգործակցության բավարար ապացույց;

3/ Գիտական որոշակի պասիվությունն ըստ մասնաճյուղի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի առավելապես ունի արտաքին, իրենց անձնական ցանկությունից ու համոզվածությունից դուրս պայմանավորվածություն: Այն հիմնականում առնչվում է նյութական-կենցաղային ու «ամբիոնային» պայմանների հետ;

4/ Գիտական ակտիվության և հետաքրքրությունների հարցում դասախոսական անձնակազմի հասարակական գիտակցության մեջ որոշ չափով թերագնահատվում է «ինքնաքննադատականության» և դեպի տարածաշրջանային հիմնահարցերը հետազոտական ուղղվածության դերը:

Ելնելով այս ամենից առաջարկվում է.

1/ Հարցման արդյունքների մասին իրազեկել պրոֆեսորա-դասախոսական անձնակազմին՝ ամբիոնների ընդհանուր ժողովներում;

2/ Մասնաճյուղում, «Կրթական ծրագրի ղեկավարի» ինստիտուտի կայացման համատեքստում, կարևորել ուսումնական պլանում և նրա իրագործման գործընթացում գիտական մշակույթն ու դասախոսի անձի բարոյա-հայրենասիրական ուղղվածությունը «աշխարհայացքային նորմ» ընդունելուն և այն կյանքի կոչելուն ուղղված քայլերի հիմնավորվածությունը;

3/ Նյութական հնարավորությունների շրջանակում օժանդակել հեղինակավոր փորձագետների դրական գնահատմամբ դասախոսների գիտական աշխատանքների վճարովի հրատարակումը՝ ի հաշիվ մասնաճյուղի;

4/Հատկապես հումանիտար մասնագիտությունների գծով խրախուսել հանրապետական (նաև միջազգային) գիտաժողովների անցկացումը մասնաճյուղում և հրատարակման արժանի զեկուցումները հրատարակել «Ակունք» ժողովածուում:

Օգտագործված հապավումները.

Ամբիոն	Հապավում
Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների	Ծ/ԻՏ
Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության	ԸՄ/Բն
Հայոց պատմության և հասարակագիտության	ՀՊատմ
Հայոց լեզվի և գրականության	ՀԼԳ
Մանկավարժության և հոգեբանության	Մ/Հ
Օտար լեզուների	ՕտԼ
Ընդհանուր տնտեսագիտության	ԸՏնտ
Տուրիզմի կառավարման և մշակութաբանության	ՏԿ/Մ
Գծանկարի, գունանկարի և քանդակի	ԳԳՔ
Դիզայնի	Դիզ

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին